

K.A. MARGARYAN

CREATING A SECONDARY TEXT AS A CONDITION FOR SOLVING A  
COMMUNICATIVE TASK

The article considers the importance of developing the skills to create a secondary (productive) text as a result of an adequate response to the information presented in the primary source text, and the condition of speech creative activity for solving a communicative task. The article presents examples of text assignments for retelling as one of the techniques for creating a secondary text.

**Keywords:** secondary text, information transformation, retelling, speech creating activity, solving a communicative task.

ՀՏԴ 81'367.3: 811.19

**Լ.Մ. ԱՇՈՒՂՅԱՆ**

ՄԻԱԴԻՄԻ ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
(Վանաձոր)

**Միադիմի** նախադասությունները միակազմ նախադասությունների ենթատեսակ են: Սույն հոդվածում դրանք ուսումնասիրվում են՝ ըստ գերադաս անդամի քերականական ձևի: Որպես լեզվական նյութ օգտագործվել են Դ. Դեմիրճյանի ստեղծագործությունները: Այս նախադասությունները դասակարգվել են երկու խմբի՝ բայական և անվանաբայական, վերջիններս էլ՝ ըստ տարբեր իմաստային խմբերի:

**Առանցքային բառեր.** բայական միակազմ նախադասություն, միադիմի նախադասություններ, անկախ և զուգորդվող միադիմի նախադասություններ, նախադասությունների ձևավորման կաղապարներ:

Ըստ գլխավոր անդամների առկայության կամ բացակայության՝ նախադասությունները բաժանվում են 2 խմբի՝ 1) **երկկազմ**, 2) **միակազմ** [1,394]: **Երկկազմ** են այն նախադասությունները, որոնցում և՛ ենթական, և՛ ստորոգյալը որոշակի բառային արտահայտություն ունեն կամ հեշտությամբ կարող են վերականգնվել համատեքստի հիման վրա [1, 394]: Օրինակ. «Ժպտաց գեղեցիկ Հայանթին, ու այդ ժպտի հետ ցոլաց նրա ձյունե արամնաշարը». [2, 2, 394]:

**Միակազմ** են այն նախադասությունները, որոնցում կա՛մ ենթական, կա՛մ դիմավոր բայը անվերականգնելի են [1, 394]: Օրինակ. «Ո՛չ տուն, ո՛չ մարդ, ո՛չ

*մի հեղք կենդանության»* [2, 3, 254]: Սրանք իրենց միակենտրոն կառուցվածքով հակադրվում են երկկազմ նախադասություններին:

Սույն աշխատանքի արդիականությունը պայմանավորված է լեզվաբանության մեջ միակազմ նախադասությունների տեսությանը մեծ տեղ հատկացնելու և կարևորելու հանգամանքով: **Միակազմ** նախադասությունների նկատմամբ մեծ հետաքրքրություն առաջացել է քսաներորդ դարում, թեև դրանք հայերենի հաղորդակցման ամենաակտիվ տարրերից մեկն են. գոյություն են ունեցել մեր լեզվի բոլոր շրջաններում: Թե՛ համաշխարհային և թե՛ հայ լեզվաբանության մեջ բավականին աշխատանք է կատարվել սրանց ուսումնասիրության առումով: **Միակազմ** նախադասությունների մասին իրենց խոսքն են ասել Մ. Աբեղյանը [3], Վ. Առաքելյանը [4], Գ. Զահուկյան [1], Ս. Գյուլբուրադյանը [5], [6], Գ. Խաչատրյանը [7], [8] և այլք: Սույն աշխատանքն էլ մի փոքրիկ փորձ է այդ բնագավառում քննության ենթարկելու **միադիմի** միակազմ նախադասությունները՝ որպես փաստական նյութ ունենալով համապատասխան օրինակները Դ. Դեմիրճյանի ստեղծագործություններից: Կատարել ենք դրանց կառուցվածքային քննություն, այսինքն՝ դրանք ներկայացվել են՝ ըստ ձևավորման շարահյուսական կաղապարների: Աշխատանքը կատարվել է նկարագրական մեթոդով:

**«Միադիմի է կոչվում այն միակազմ նախադասությունը, որի գերադաս անդամը կամ նրա բաղադրիչներից մեկն արտահայտված է առհասարակ կամ փոյալ կիրառության մեջ խոնարհման լրիվ հարացույց չունեցող բայով»** [8,55]: Օրինակ՝ *«Այդ այն ժամն էր, երբ չգիտես՝ մու՛թ է, թե՛ լույս»* [9, 229]: *«Եվ մեկն այնպես թվաց, թե այդ լուռ ու հպարտ էակը վաղաձանդ է ու մտերիմ»* [9, 229]: Թեև սրանց գերադաս անդամն արտահայտված է բայի եզակի երրորդ դեմքով, սակայն այդ դեմքը վերջավորության տեսակետից ոչ մի կերպ չի կապվում եղողի, կատարողի հետ: Այդ հանգամանքն է պատճառը, որ որոշ գիտնականներ այս տիպի նախադասություններն անվանել են **անդեմ** և **դիմագուրկ** բայերով նախադասություններ: Ա. Այտընյանն այդ նախադասություններն անվանում է **միադիմի** այն պատճառով, որ **«միայն եզակի երրորդ դեմքը կգործածուի»** [8, 80-81]: Ս. Գյուլբուրադյանը դրանք անվանում է **վիճակային բուն անենթակա** նախադասություններ [5,123]: Գ. Խաչատրյանը սրանք անվանում է **միադիմի**՝ համարելով միակազմ նախադասությունների առանձին տեսակ և ոչ թե դիմավորների ենթատեսակ, քանի որ սրանց գերադաս անդամն արտահայտվում է միայն բայի եզակի երրորդ դեմքով, սակայն այդ երրորդ դեմքը վերջավորության տեսակետից ձևական է, և նրանով արտահայտված երևույթը, գործո-

դությունը դիմային տեսակետից որևէ կերպ չի կապվում եղողի, կատարողի հետ: Բացի այդ, քերականական ամեն մի կատեգորիա ենթադրում է իրողության առնվազն երկու եզր, մինչդեռ սրանցում երրորդ դեմքը չի կարող հակադրվել մյուս դեմքերին և նրանց հետ հարացուցային շարք կազմել [7, 67]:

Ըստ գերադաս անդամի խոսքամասային պատկանելության՝ **միադիմի միակազմ** նախադասությունները բաժանվում են երկու խմբի՝ **բայական** (արտահայտված մեկ կամ մի քանի բայերով), **անվանաբայական** (արտահայտված անուն խոսքի մաս + բայի միադիմի ձև կաղապարով):

#### **Բայական են.**

1) **Օդերևութանիշ նախադասությունները:** «Օդերևութանիշ են համարվում այն բայական միակազմ նախադասությունները, որոնցում միադիմի բայաձևի միջոցով արձանագրվում են օդերևութաբանության հետ կապված փոփոխություններ»: Օրինակ՝ «Լուսանում է» [9,123]: «Մութն ընկավ» [9, 937]: «Լույսը բացվում էր» [2, 3, 158]: Քերականագիտության մեջ հետաքրքրություն է առաջացրել այս նախադասությունների ենթակա չունենալու պատճառի հարցը: Արտահայտվել է այն կարծիքը, որ այս նախադասությունները հնուց են գալիս և արտացոլում են մարդու նախնական մտածողության տարրերն այն իմաստով, որ մարդը, դիտելով այդ երևույթները և չիմանալով դրանց պատճառը, նախադասությունները կազմել է անենթակա ձևով: Նա այս գործողությունների կատարող համարել է «տոտեմին», բայց վախեցել է տալ անունը և նախադասությունները կառուցել է անենթակա: Հետագայում այս ենթական սկսել է մարդու կողմից չգիտակցվել, և այս տիպի նախադասությունները դարձել են միակազմ: Մեր կարծիքով՝ սրանք չունեն և չեն կարող ունենալ ենթակա, քանի որ սրանցում արտահայտվում են ինքնին կատարվող գործողություններ, և դիմավոր բայն իր նշանակությամբ ենթակայի անհրաժեշտություն չի թելադրում:

Օդերևութանիշ բայական նախադասությունները կարող են արտահայտվել նաև բայական հարադրությամբ: Օրինակ. «Մութն ընկել էր արդեն» [9,193]: «Լույսը բացվում է» [9, 61]:

բ) **Չեզոք և ներգործական սեռի որոշ բայերի կրավորական փոքրերակով արտահայտված նախադասությունները:** Օրինակ. «...Սրբունը, որ ամուսնու մահից հետո լվացք անելիս մի անգամ սաստիկ մրսեց, փիֆով հիվանդացավ և անդամալույծ եղավ. էլ չիմացվեց՝ փիֆից էր, թե արդեն փրամադիր էր» [9, 9]:

գ) **Եղանակիչ բայով և անորոշ դերբայով արտահայտված նախադասությունները:** Օրինակ. «Չարժե նորոգել նրա վիշտը՝ կրկին [2, 3, 73]:

դ) **Մի շարք կրավորական և չեզոք սեռի բայերով արտահայտված այն նախադասությունները, որոնք հանդես են գալիս ենթակա երկրորդական նախադասության հետ զուգորդված:** Օրինակ. *«Թվում էր, թե դա արագիլի կտուցների կափկափոց է»* [9, 70]: *«Դեմքից երևում էր, որ բնությունը մի ժամանակ հանգիստ խղճով ընտրել է նրան...»* [9, 22]:

Հայտնի է, որ պարզ և բարդ նախադասությունների միջև գոյություն ունի կառուցվածքային տարբերություն, որն իր արտահայտությունն է գտնում վերջինիս մեջ առկա երկու (կամ ավելի) ստորոգման իրողություններով: Վերանալով բարդ կառույցի մեջ գտնվող երկու կամ ավելի պարզ նախադասությունների մեջ եղած հարաբերություններից (համադաս, գերադաս կամ ստորադաս)՝ այդ նախադասությունները դիտում ենք սոսկ որպես ստորոգմամբ օժտված շարահյուսական առանձին միավորներ: Վ. Առաքելյանը գտնում է, որ բարդ կառույցի ենթակայի գործառույթ կատարող ստորադաս նախադասություն ունեցող գերադաս նախադասությունը միակազմ է, քանի որ ինքնուրույն միավոր է դարձել նույնիսկ իբրև բարդության մաս: Այս տիպի նախադասությունները Գ. Խաչատրյանն անվանում է **զուգորդվող միակազմ**՝ ի հակադրություն **անկախ միակազմ** նախադասությունների, որոնք միակազմ են ոչ թե ինչ-որ դրության մեջ, այլ բոլոր դեպքերում՝ թե՛ որպես հաղորդակցական անկախ միավոր, թե՛ որպես բարդ կառույցի որևէ եզր:

ե) **Բայական միակազմ նախադասություններ են նաև «Քունը փանում է», «Ուշքը գնաց», «Վրան դող է եկել» և նմանատիպ նախադասությունները,** որոնց գերադաս անդամն արտահայտված է բայական հարադրությամբ. Օրինակ՝ *«Օրը շոգ է... Օրվա քունը փանում է: Քունը չէր փանում: Ջերմ եկավ վրան»* [9, 94]:

Բայական միադիմի միակազմ նախադասությունների գերադաս անդամն արտահայտվում է բայի բոլոր եղանակներով ու ժամանակներով, բայց ավելի հաճախադեպ են սահմանական եղանակի ժամանակաձևերով արտահայտված գերադաս անդամով միադիմի նախադասությունները: Վերը նշված բոլոր տիպի նախադասություններն էլ հաճախադեպ են Դ. Դեմիրճյանի ստեղծագործություններում:

Անվանաբայական բաղադրյալ միադիմի նախադասությունները ունեն արտահայտության հետևյալ ձևերը.

ա) **Օդերևութանիշ բառ + միադիմի բայաձև** կաղապար, որով արտահայտվում է օդերևութաբանության հետ կապված **առկայություն, դրություն**՝

**առանց փոփոխության:** Որպես ստորոգելի գործածվում են **ամպրոպ, կայծակ, ձյուն, քամի, ցուրփ, շոգ, տաք, մութ, լույս** և այլ բառեր. «Ծովը հեռում էր ափին. քամի էր. ցուրփ» [9, 261]: «Այդ այն ժամն էր, երբ չգիտես՝ մութ է. թե՛ լույս» [9, 5]: «Մթնշաղ էր, որ ճամփա ընկան» [9, 5]: Սրանցում արտահայտվում է ոչ միայն մթնոլորտի, այլև ժամանակային փոփոխություն:

բ) **Ժամանականիշ բառ + միադիմի բայածև** կաղապար, որով արձանագրվում են որոշակի կամ մոտավոր ժամանակահատվածներ: Գերադաս անդամի կազմում ստորոգելիի դեր են կատարում **տարի, աշուն, ձմեռ, գարուն, օր, ժամանակ, ամիս, շաբաթվա օրեր մարտնանշող** և այլ ժամանականիշ բառեր: Օրինակ. «*Դեռ վաղորդյան ժամ չէ, տե՛ր իմ,- ասաց նա պարկառու կարեկցանքով:* «*Թարմ գարուն էր. օրը պայծառ, կապույտակ*» [9, 99]:

Երբեմն օդերևութանիշ և ժամանականիշ նախադասությունների միջոցով հեղինակն արտահայտում է իր հոգեվիճակը: Օրինակ.

«-Գնաց զինվոր հավաքելու շունը...

-Կհավաքի,- խոժոռվեց գզգզված շինականը,- շուն շանը:

-Տեղներս ասել է՝ ցրվեց»:

«Մշուշ է առաջը, չի կարողանում պարզել» [9, 112]:

գ) **Իրավիճականիշ բառ + միադիմի բայածև** կաղապար: Սրանց գլխավոր անդամի միջոցով արձանագրվում, նկարագրվում է մարդկային կյանքի հետ անմիջականորեն կապված որևէ իրավիճակ: Այսպիսի նախադասությունների գերադաս անդամի կազմում որպես ստորոգելի հանդես են գալիս **դավ, պատերազմ, մահ, խուճապ, ողբ, սով, սուգ, խաղաղություն** և այլ իրավիճականիշ վերացական գոյականներ: Սրանցում արձանագրվում են հասարակական, ընտանեկան, անձնական, ընդհանրապես՝ մարդկանց հետ կապված վիճակներ: Օրինակ՝ «Այնտեղ հանդիսավոր լռություն է» [2,167]: «*Պատերա՞զմ, պատերազմ չէ, խաղաղությո՞ւն՝ բայց ի՞նչ խաղաղություն է...*» [9, 565]:

դ) **Վերաբերմունքանիշ բառ + միադիմի բայածև** կաղապար, որոնցով արտահայտվում է խոսողի տրամադրվածությունը, վերաբերմունքը գործողության նկատմամբ: Սրանց գերադաս անդամում ստորոգելիի դեր են կատարում վերաբերմունք արտահայտող բառերը՝ **լավ, վատ, բարի, հաճելի, տհաճ** և այլն: Օրինակ՝ «Այդպես ավելի լավ է» (2, 167): «*Դուրսը բուք էր, ուստի ներսը տաք պալատում կրկնակի հաճելի էր*» [2, 3, 339]: «Ձանձրալի է այստեղ» [9, 208]: «Տարօրինակ է՝ մի՞թե ուրախ է...» [9, 303]:

ե) **Հոգեվիճականիչ բառ + միադիմի բայածև** կաղապարի միջոցով նկարագրվում է որևէ հոգեվիճակ, որևէ ներքին ապրում: Գերադաս անդամի ստորոգելիի դերում հանդես են գալիս հոգեվիճակ, տրամադրություն, ներքին ապրում անվանող **անձկություն, նեղություն, ցավ, տրտմություն, երջանկություն, տխրություն, խնդություն, ծանր, լավ** գոյականները: Օրինակ. *«Թախծալի է. թախծալի,- բարձրաձայն մտածում էր Միշան, ծանր է. բայց բոլորը մարդկանց համար է»* [9, 224]: *«Ամառանոցում նրա համար վատ էր, մինչև իսկ շատ անգամ ուրախ էր»* [9, 291]:

զ) **Եղանակիչ բառ + միադիմի բայածև + անորոշ դերբայ** կաղապար, որոնցում եղանակիչ բառի գործառույթ են կատարում՝ **ախորժելի, ահավոր, անբավ, անդեպ, անկարելի, կարելի, հարկ, հարկավոր, արժանի** և այլ բառեր: Օրինակ՝ *«Ի՞նչ կարելի էր անել այն մեծ աղետի դեմ, որ վեր է կացել երկրաշարժի, փոթորկի, ժանտախտի նման»* [9, 286]: *«Ո՛հ, պետք է հաղթել»* [9, 93]: *«Մտածեց, մտածեց և վերջապես այն կետին հասավ, որ ամենից առաջ հարկավոր էր տեղ գտնել իր համար... քաղաքում»* [2, 2, 7]:

Այս տիպի նախադասությունները լինում են անկախ և զուգորդվող: *«Հարկավոր է, որ ես կրկին գնամ Պարսկաստան»:* *«Պետք է հաղթել»* [9, 93]:

է) **Եղանակիչ բառ + միադիմի բայածև** կաղապար. այս նախադասությունները հանդես են գալիս ենթակա երկրորդական նախադասության հետ զուգորդված: Օրինակ. *«Հաճի մոր համար պարզ էր, որ Հաճի աղան հոգեկան հիվանդ է դառել»* [9, 20]: *«Նկատելի էր, որ ծերուկը ևս բռնված էր ինչ-որ հոգեկան անհավասարակշիռ դրությամբ»* [9, 301]:

Միադիմի միակազմ նախադասությունները բնույթով լինում են պատմողական, հարցական և բացականչական: Օրինակներ. *«Նրան թվում էր, թե գետականի այդ միալար վշտոց գետականի վշտոց չէ, այլ դա երջանկության համարիեզերական մի օվկիան է»* [2, 2, 73]: *«Օրվա ո՞ր ժամն է»* [9, 62]: *«Մի տես՝ ի՞նչ լռություն է»* [9,196]:

Միադիմի միակազմ նախադասությունները խոսքում կարող են հանդես գալ և՛ որպես անկախ, և՛ որպես կախյալ հաղորդակցական միավորներ:

Պարզ նախադասությունները լինում են համառոտ և ընդարձակ: Օրինակ՝ *«Մթնշաղ էր»* [9, 267], *«Ցուրտ է»* [9, 63] (համառոտ): *«Ինչ-որ լուսաբաց է»* [9, 77]: *«Դուրսը քամի է»* [9, 70]:

Բարդության կազմում գործածվելով՝ հանդես են գալիս և՛ համադասական, և՛ ստորադասական կառույցներում: Օրինակներ. *«Ծովը հնում էր ավին»*,

*քամի էր, ցուրտ էր»* [9, 26], *«Մոլթն է անապատում, հեքիաթներ են շրջում անապատում»* [9, 90]: *«Պարզ էր՝ Աստղիկի միտքը զբաղված էր մի բանով, որ կապ չուներ այդ ընդանիքի հետ»* [9, 233]:

Թե՛ բայական, թե՛ անվանաբայական նախադասությունները հաճախադեպ են Դ. Դեմիրճյանի ստեղծագործություններում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ջահուկյան Գ.Բ.** Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները.- Երևան, 1974:
2. **Դեմիրճյան Դ.Դ.** Երկերի ժողովածու, հ. 2, 3.- Երևան, 1977:
3. **Աբեղյան Մ. Մ.** Աշխարհաբարի շարահյուսություն.- Վաղարշապատ, 1912:
4. **Առաքելյան Վ. Գ.** Հայերենի շարահյուսություն, հ 1- 2.- Երևան, 1958-1964:
5. **Գյուլբուդաղյան Ս.Վ.** Ժամանակակից հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն, 1988:
6. **Գյուլբուդաղյան Ս.Վ.** Միակազմ նախադասությունները ժամանակակից հայերենում.- Երևան, 1967:
7. **Խաչատրյան Գ.Կ.** Գրաբարի բայական միակազմ նախադասությունները.- Երևան, Վան Արյան հրատ, 2002:
8. **Խաչատրյան Գ.Կ.** Գրաբարի բայական միակազմ նախադասությունները (5-րդ դ.) (թեկնածուականատենախոսություն).- Երևան, 1986:
9. **Դեմիրճյան, Դ.** Երկերի ժողովածու.- Երևան, 1946:

**Л.М. АШУГЯН**

#### ОДНОСОСТАВНЫЕ ЛИЧНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ В ПРОИЗВЕДЕНИЯХ Д. ДЕМИРЧЯНА

Односоставные личные предложения являются подтипами глагольных односоставных предложений. В настоящей статье вышеупомянутые предложения изучены с точки зрения грамматической формы главного члена предложения. В качестве языкового материала были использованы произведения Д. Демирчяна. Односоставные личные предложения классифицированы по двум группам: глагольные и номинативные, при этом последние типы рассматриваются в соответствии с разными семантическими группами.

**Ключевые слова:** глагольное односоставное предложение, односоставные личные предложения, независимые и комбинированные предложения, модели формирования предложений.

**L.M. ASHUGHYAN**

**UNIPERSONAL AND ONE-MEMBER SENTENCES IN  
D.DEMIRCHYAN'S WORKS**

Unipersonal one-member sentences are subtypes of verbal one-member sentences. In the present article these types of sentences are examined from the standpoint of the grammatical form of the principal member. As a language source material, D. Demirchyan's works are used. Unipersonal (impersonal) one-member sentences are classified under two groups: verbal and nominal, the latter types are reviewed according to different semantic groups.

**Keywords:** verbal one-member sentence, unipersonal sentences, independent and combined sentences, sentence-forming patterns.

UDC 81'276.11 : 140.8

**V.G. AMIRYAN, A.F. ABRAHAMYAN, N.G. KARAPETYAN**

**HOW OUR LANGUAGE SHAPES WHO WE ARE: LANGUAGE AND  
WORLDVIEW MOLDING**

*(Gyumri)*

In this article we investigate the intricate relationship between a person's native language and their sense of self with a specific emphasis on the practical implications of this complex interaction. Our goal is to shed light on the profound impact that one's mother tongue has on the formation of personal and group identities. Furthermore, we reflect on the practical importance of understanding this connection in diverse societal contexts.

**Keywords:** diverse forms, identity, to intertwine, interactions, intercultural communication, to enhance empathy, cohesion, resilience.

Language, through its diverse forms and expressions, plays a central role in how individuals perceive, experience, and express their surroundings. It extends beyond mere communication, intricately intertwining with human identity, influencing our self-perception and interactions with others. Scholars across various fields, including Linguistics, Psychology, Anthropology and Sociology, have been captivated by the profound impact of one's native language on their sense of self for quite some time.

Our linguistic identity undergoes constant change, adapting as we interact with the intricate relationship between language and the socio-cultural contexts surrounding us. For individuals whose mother tongue is Armenian, this interaction possesses distinctive traits that symbolize the Armenian culture and heritage.